

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՎԱՐՈՒՄ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարանի համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մէկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռալն դրկի հետեւեալ հասցեով

ИПРАВУНКА «ИРОВОУНКА» ІРАУНКА. — ՎԱՌՆԱ (Պուլխարիա)
Редакция на вѣст.
„ИРАВУНКА“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան գրողեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դատարան-
ները միայն կը հրատարակուին աւ-
տոգրովին կամ մասամբ:
Ծանուցումն տողը 20 սանթիմ. երեք
ֆեն աւելի անգամներու համար 20 0/0
զեղջ կը լինի:

ՕՏԱՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ամէն հայաբնակ տեղեր օտար
դպրոցներ կը գտնուին: Կարծիւ
վառնայի մէջ չը կային այդ հաս-
տատութիւնները, բայց հոս ալ
հասան՝ արծիւի թեւերով՝ գաղ-
թականութեան ետեւէն: Բաթէրա
ու մայրապետ, միսիօնարու մի-
սիօնարուհի զիրար զիջով հկան եւ
հաստատուեցան միւր քիթին տակ:

Բնաւ չենք ուզեր զբաղուիլ ի-
րենց բրօքականտայի խնդրով, ա-
տիկա նոյն իսկ մեր ուսմիկ դա-
սակարգին ուղեղին մէջ բոյն դը-
րած ճշմարտութիւն մըն է, զոր
հաստատելու պէտքը չունինք:
Մենք աւելի մատնանիչ ընել կու-
նենք կրթական տեսակէտով անոնց
տուած օգուտն ու փաստները: մի-
տալին երկու կողմն ալ պէտք է
կարգալ:

Ամենուս համար բացայայտ է
թէ աս դպրոցները հիմնուած են
կամ «վասն ամենամեծ փառացն
Աստուծոյ» կամ «Տիրոջը խօսք»
ին տարածմանը համար: Հետեւա-
բար ուղղութիւնը՝ որ կը տիրէ
ատ հաստատութիւններուն մէջ՝
ճշդ ու մահացնող է:

Պրպոնցէք բաթէրաներու կամ
մայրապետներու դպրոցը յաճախող
տղոց պալուսակը, ու պիտի գտ-
նէք անպատճառ, ոչ միայն Ս.
Գրոց պատմութիւններ — ատիկա
չառ ընական է — այլ զանազան
դասագիրքեր, իրենց ընդունած
բանաձեւերով ու նիւթերով պատ-
րաստուած, ուր աշակերտը չի
կրնայ հանդիպիլ ապստամբեցնող
բացատրութեան: Հայ տղան կամ
աղջիկը, որոնք կերթան աշակեր-
տել ատ կրօնաւորներուն, շատ
անգամ ու գրիթէ միշտ, զուրկ
են ոչ միայն Ֆրանսերէն լեզուի
տարրական ծանօթութենէ մը, այլ
նոյն իսկ կերթան հոն՝ առանց
չնորհեցով հայերէն հասարակ ըն-
թերցանութիւն մը գիտնալու: Ե-
րեւակայեցէք ատ խեղճերուն վի-
ճակը, երբ անոնց ձեռքը կուտան
ամենէն առաջ սրբազան պատմու-
թիւն մը (վրդովուելու բան չի կայ)
քառաքիթի համար է), քերական-

ութիւն մը, թուարանութիւն մը
եւ որ ի կարգին, ընական է ամէն-
քըն ալ Ֆրանսերէն լեզուով: Կ'անց-
նին ամիսներ, տարիներ ու տղան
անկարող է տակաւին գիտակցա-
բար ըմբռնելու եւ վերլուծելու իր
ո՛ր եւ մէկ դասագիրքին առաջին
մէկ սարբերութիւնը: Բան մը
չաճած է սակայն, թուականի պէս
գոց ընելու, կապիկի մը նման
ծամածուելու եւ մեքենայի մը ա-
նըղայութիւնովը գործելու ար-
հեստը, որ ուղղակի զինքը պիտի
առաջնորդէ կեղծելու մեծ արհես-
տին: Կեղծել շեշտը, կեղծել շար-
ժումը, կեղծել ձեւերը Ֆրանսացի
տղան, որուն ոչ շեշտը, ոչ ա-
ռայող շարժումը, ոչ ալ կիրթ ձե-
ւերը կրցած է իւրացնել՝ զգալով
ու խորհելով:

Ինչ զգացում ու ինչ տոհմա-
սիրութիւն կըսպասէք այն աղջի-
կէն որ երկու բառ տակաւին ի-
րարու քով չի կրնայ բերելով հան-
դերձ՝ զուտ հայերէն «ժողովաւն»
բառին «ն» գիրը ֆրանսերէն ուր-
գային «ն»ի պէս կը հնչէ, միղ-
մացնելով եւ նրբացնելով նախորդ
վանկերն ալ, ու ասիկա պարզա-
պէս գիտցնելու համար խեղճ փե-
րեղակի մը թէ ինքը գաղղիալար
գիտէ: Յետային ինչ առաքինու-
թիւն կրնանք սպասիլ ապագային
այն պղտիկ աղջիկներէն՝ որոնք
հիմակուց իրենց պարծանք կը հա-
մարին «քուլթուր Բէն» ըսել ի-
րենց տան սպասաւորին՝ փոխանակ
ըսելու «գանակը բեր»: տակաւին
ինչ օրինակներ կրնայի հայթա-
թել, եթէ պերճախօս օրինակներ
չըլլային արդէն բոլոր այն խեղ-
ճերը, որոնք թափթիւած են ադ-
վարժարաններէն դուրս, ապակա-
նելով ու օտարացնելով մեր ընտա-
նական ու ընկերական մաքուր
չըլլանակները: Ու երբ աչքիս առ-
ջիւ կը բերեմ դրամական այն խո-
չոր գոհողութիւնները՝ որոնք յան-
ձըն կառնուին շատ մը ծնողքներէ,
ասանկ տափակ ու իմաստակ սե-
րունք մը առաջ բերելու համար,
երբ կը մտածեմ այն յուսախա-
բութիւններուն վրայ՝ որ վերջէն
կուսնեան այդ կարգի ծնողքներ,
անիծելով, ընդհանրապէս, դըպ-
րոցը եւ ուսումը, կարգահատիմ

անոնց այդ անհրկած դիրքին ու
յուսահատ դարձումներուն, եւ կը
հարցնեմ ինքնին թէ՛ կարելի չէ՞
այդ գոհմանները հայ վարժարան-
ներու տալ ու պահանջել որ անոնք
աւելի կանոնաւոր, աւելի ճոխ ու
աւելի նպատակայարմար ըլլան: Ե-
թէ կուզենք որ անպատճառ մեր
տղաքը գաղղիացիէ մը սովորին
գաղղիերէնը — անհիշեթ մտա-
ծում — դժուարութիւն մը չի կայ
կարծեմ անոր ամսականը տպահ-
վելու մէջ, բաւական է որ քանի
մը կարող ծնողքներ միանան, այն
ատեն գէթ սա մեծ առաւելութիւ-
նը կուսնեանք որ հայերէն լեզուն
խօսող ու ազգային դաստիարա-
կութիւն ընդունող տղոց հետ
գործ պիտի ունենայ գաղղիացին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պոլիս, 6 մարտ 99

Կիլիկիոյ կաթողիկոսական խըն-
դիրը այս միջոցիս դարձեալ կը
յուզուի եւ իսկապէս ծանրացած
կերպարանք մը ունի:

Օրմանեան պատրիարքը պալա-
տի հետ միացած բաւական յա-
ռաջ տարած է գործը. որ նոյն
իսկ վերջին խառն ժողովոյ նիս-
տին մէջ բուռն վիճաբանութեան
առարկայ դարձած է:

Օրմանեանի անհոգութիւնը եւ
Պապական հայոց Պատրիարք Ա-
զարեանի եւ Հովմայ քահանայա-
պետին նուիրակ Պօնէթի ջան-
քերը միանալով ինչպէս որ վանայ
գլխուն ներկայ կրօնափոխութեան
աղետը բերին, նոյնպէս այս ան-
գամ ալ Օրմանեան պալատին հետ
կը ջանայ ազգին գլխուն աւելի
ծանր փորձանք մը բերել. այսին-
քըն ինք Պոլսոյ պատրիարք մնա-
լով հանգերձ կիլիկիոյ կաթողի-
կոսութեան տիրոջն ալ կրնի կուզէ:

Ինչպէս շատերուն ծանօթ է,
երկար տարիներէ ի վեր Երեսըղի
պալատը եւ Բ. Դուռը ամէն խո-
րամակութիւն ի գործ կը դնեն,
որպէսզի կարող ըլլան Տաճկաստա-
նի հայութիւնը կրօնապէս անջա-
տել Ս. Էջմիածնայ կաթողիկոսա-
րանէն, որ օտար տէրութեան մը
հողին վրայ գտնուելով տաճկահա-

յը միշտ օտար ներշնչումներու եւ
հակաթուրք ձգտումներու մէջ կը
պահէ: Պալատը այս նպատակին
հասնելու համար նախ ուզեց զօ-
րացնել Կիլիկիոյ կաթողիկոսու-
թիւնը. հանգուցեալ Մկրտիչ Կա-
թողիկոս պարսաւելի հակումներով
ինքզինքը կառավարութեան բո-
լոր էնթրիքներուն տրամադրելի
ցոյց տուաւ, կարծելով թէ անոնց
Պատրիարքարանի միջնորդութեան
ուղղակի Դրան հետ յարաբերու-
թեան մտնելու համար իրեն տըր-
ուած իրաւասութիւնը հետզհետէ
ընդարձակուելով, օր մը բոլոր
Տաճկահայոց կաթողիկոսը պիտի
հաշակուի: Մկրտիչ կաթողիկոսի
Դրան հետ բռնածայս ընթացքին
ընդհանուր հայութեան միութեան
կապը խզելու բնութիւն ունենալը
բարեբախտաբար բոլոր խելահաս
ազգայնոց կողմէ ճանչցուեցաւ. եւ
հետեւաբար Գաւառաց առաջնոր-
դարանները ու Պոլսոյ կեդրոնա-
կան Ազգ. վարչութիւնը ոգի ի բը-
ռին աշխատեցան Կիլիկիոյ կաթո-
ղիկոսին իրաւասութեան սահմանը
չընդարձակելու. որով Դրան մե-
քենայութիւնները ապարդիւն մը
նացին ցարդ:

Բայց այս անգամ Պոլսոյ պատ-
րիարքը ինք կուզայ Դրան ու Պա-
լատին վաղեմի ձգտումներուն նոր
ուժեղացում: որպէսզի Կիլիկիոյ կաթո-
ղիկոսութեան տիրոջն ալ իր վրայ
առնելէ վերջ ջանայ բոլոր Տաճկա-
հայոց կաթողիկոս հաշակուելու:
Բնական է որ պատրիարքութեան
իրաւասութիւնները իրեն դիւրու-
թիւն կուտան իր այս ազգազաւ
գաղափարը իրականացնելու, եթէ
չարունակէ ժողովուրդը անտար-
բեր մնալ: Օրմանեան կը կարծէ
թէ Պոլսոյ մէջ յեղափոխականաց
լուսթիւնը ուժի չգոյութեան նշան
է. բայց նա վստահ ըլլալու է թէ
ժողովուրդի ձայնը յանկարծակտն
պայթումով մը օդը կը ցնդեցնէ
թէ՛ իր երեւակայած կաթողիկո-
սութիւնը, թէ իր պատրիարքու-
թիւնը եւ թէ իր շուրջը գտնուող
վսեմաշուքներու վոհմակը. կար-
ծեմ այդ պայթումը — շատ հեռու
չի պիտի ըլլայ եթէ Օրմանեան
չարունակէ իր այդ ազգադաւ

ձեռնարկութեան մէջ քայլ մըն ալ յառաջանալ :

Այս և ուրիշ խնդիրներու մասին յայտարարելու ցտեսութիւն :

ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

Միտիթարական է ըսել որ քիչ րէն արդէն բացուած կը լինի Ռուսահայ չորրորդ որբանոցը . Հայու յուսարից ապագայի մէկ շառաւիղն ալ, և այդ կը լինի մի միայն ջանշտանցի մը խոհեմ և հեռատես ձեռնբեցութեամբ . մի ապագայ՝ յորում մարդ կը պարտաւորի խորհիլ թէ, այսպիսի կարի ազգօգուտ գործի մասին մտածող ու գործող անձ բացարձակէս մի հատ պարտ էր լինել ամբողջ հայ ազգին մէջ . և ինչու ախորհրակ ուրիշ անձինք չի գտնուեցան . ինչ ցաւալի դատարկութիւն գործունէութեան . ինչ դժբախտ դատապարտութիւն միայն խօսելու, վիճաբանելու, քննադատելու առանց սակայն գործի, լոյս տալու և դեղ ու դարման ճարելու :

Տնտեսական քայքայումն օր քան զօր կը ծանրանայ մեր վրայ, արուեստական ու բնական սովեր նորանոր օղակներ կը հիւսեն հայու գերութեան շղթայի շուրջը, և մենք դեռ տղայական երազներով, յիմար զառանցանքով հայութեան արդէն ապականեալ միջոցները կը նսեմացնենք . նիւթական ու բարոյական մոլութեան մէջ կը լողանք : Ռուս է ջանշտանի ընկերը . Ռուսիոյ նման խստապահանջ երկրի մը մէջ Հայութիւնը լրջօրէն պաշտպանող ու անոր դժբախտ որբութիւններուն ապաստարաններ հիմնելու բարի բաղձանքն ունեցող Հայաստանցին, Տաճկաստանցին . . . հա՛, Տրդատ վարդապետ մը եւս կեսարեա կայ . ճիշդ է, այդ գործունեայ Երուսաղէմական վտարեալը, միակն իր դասակարգին մէջ արժան է ջանշտանի զոյգ լինելու . և հայ բանակին Ղիւնդն ու վարդանն ունենալ . իսկ բանակը ո՛ւր է . . . վարդապետ մը խեղճ մի գաւառի անկիւն կարող կը լինի անձնական ջանքով որբանոց մը բանալ ու պահել . ջանշտանց մը որբանոցի գործը չէ թէ միայն կը մտածէ, կը ստեղծէ, կիրառործէ, հապա զայն պաշտօնական հանգամանք ևս կօծտէ յապահովութիւն ապագայ ամէն վտանգներու, որոնց հանգէպ սոսկալի մի համարատեսութիւն ալ կը նախախնայ մէ . . . Արդեօք ներքի չ'է մեղ հարցնել, թէ ո՛ւր է հայոց Հայրապետի որբանոցը . Հայոց Հայրիկը ինչով ապացուցուց իր հայրիկութեան իրաւունքը : Մի կաթողիկոս ճեմարան կանգնեց յէջմիւսիս . մի ուրիշը Տփղիս, մի ուրիշը լիճ մը և չուր մը կտակեց վանքին . Օրմանեան դպրեմանք մը

հաստատեց (՝), Ներսէս կեդրոնական վարժարան մը, Պալեան վարդապետ որբանոց մը, խորիմանի անուան դէմ ինչ գրեց . . . Էջմիս . ծին հասնող հայերուն մի քանիսին քիչ և վանեցուց ալ առատ ուսկլինիք բաժնեց . դա գործ է միթէ . առ ու տուր . առանց հայրիկ և եկեղեցիկոս լինելու ամէն մահկանացու կարող էր բաժանել այդպիսի փող միայն փող տուող, նուիրող լինէր նրան, որ անշուշտ ինքն ալ իւրը պիտի մտածէր . . .

Անհրաժեշտ ապացոյցներով ըստուգուած է այսօր որ Հայաստանի մէջ (վան) չափահասները ընտանեօք կրօնափախ կը լինին . մանկները (որբեր) հոգեւոր ու մարմնով կը կորսուին մարդորանելու ծուղակին մէջ . շատեր սովէն կը մեռնին, իսկ անդին, արտասահման ապաստանեալ հայեր մեծ մասամբ օտարանալու և աստիճանաբար իսպառ կորսուելու անգագլի վտանգին մէջն են . ո՛վ ինչ կը մտածէ . ո՛ւր է հայ միլիոնատէրը թէ իր դրամը շահագործելու եւ թէ հայ մշակը հայ պահելու ազնիւ մտադրութեամբ գործ, գործարան բանալու ձեռնբեցութեան մէջ : Երեւոյթներ, որք հայութեան կենաց վերջին կայծն ալ, տկար յոյսն ալ իսպառ ոչնչացնելու բնութիւնն ունին, որոց հանդէպ միտիթարական խիստ քիչ պատճառներ ունին մեր աններելի անտարբերութեամբ : Մեր ազգային գործիչները դեռ մինչեւ այսօր չ'իրեւացին մի գովելի - գլուխ գործոցով . դեռ ո՛չ մի լրագիր այնչափ եռանդուն կերպով չի շնչուց, չի գրեց և իր կարգ խնդրոցին մէջ զլիսաւոր տեղը չը տուաւ որբանոցներու հաստատման, ծրագրի և դիւրութեան վերաբերմամբ իրագործելի միջոցներու և առաջարկներու : Որբանոց . ահա այսօր մեր ամենակարեւոր պէտքը . ապագայի ազգայնական ամեն տեսակ բարի յոյսերու հիմնաքարը : Բայց կը լսենք թէ Հայոց Հայրապետին առաջարկուած է, Նորին Օծութեան անուամբ մի որբանոցի բացումն արտասահմանի մէջ, և նա, Հայրիկն ալ, կենթադրուի թէ, հաւանած է այդ առաջարկին և «խորիման որբանոց» անուն մի հաստատութիւն բանալ :

Ոգտակար և փափաքելի է որ, մանաւանդ հիմա, երբ այդ նպատակաւ Պապուի մէջ 30,000 ուսկլի դրամ հաւաքուած է, իսկոյն եւթ ձեռնարկուի Եւրոպոյ որ և իցէ մի յարմար քաղաքի մէջ «խորիման որբանոց»ը բացուի . հեռի թրքական բարբարոս տիրապետութենէն և ամէն ակնունելի վտանգներէն, ազատ և կիրթ քաղաքի մը մէջ, ուր կարելի լինի որբերուն զուտ ազգային կրթութիւն և աղնիւ դաստիարակութիւն տալ : Բայց ըստ գործնականին լաւ կը լինէր կցել այդ հաստատութեան և արհեստական ճիւղ,

ուր որբ մանուկը մտքի և մարմնայ աշար միանգամայն ստանալով, դուրս ելած ժամանակ չը շուարի իր կենաց պայքարին մէջ, ինչպէս կը պատահի առհասարակ ամէն աղքատ դասակարգի ուսանողներու :

Մենք կը հաւատանք թէ, վեհ. Հայրապետը առատ ամուսնալուծութիւն յետոյ, իր բարձր ուշադրութիւնը դառնցնելով Հայ որբերու տխուր կացութեան վրայ, իրեւ բաժն հովիւ և՛ ճշմարետ Հայրիկ, շուտով կը ձեռնարկէ որբանոցի բացման, շնորհիւ դրամին, որ պտտրաստ է և իր բարի կամաց համոձայն, որով մենք ուրախ կը լինինք ունենալու արժանաւոր արձանագրութիւն ծերունի Հայրապետի կաթողիկոսական գործոց կամ կեանքի մէջ :

Սոսիալ

ՍՈՑԻԱԼ ԲԱՐԿԻՆԱՅԻ ՃԱՌՐ

(Շար. Ասիոյի քիւն և վերջ)

Ինձ մեղադրում են ապստամբութիւն յորդորելու : Բայց ես երբեք չեմ յորդորել ժողովրդին դէպի անմիջական ապստամբութիւն եւ չէի էլ կարող այդ անել, որովհետեւ կարծում եմ որ յեղափոխութիւնը մի ամբողջ բարձր պատմական պայմանների հետեւանք կարող է լինել և ոչ թէ առանձին անհատների գործ դրած գրգռումների : Արիւնաճեղութիւնը ինքն ըստ ինքեան ինձ համար, ի հարկէ, բոլորովին ցանկալի չէ : Ես ամենեւին չունեմ այն արիւնաբուռ ու խստախիտ հակումները, որոնք պատմագրը ամենայն հեշտութեամբ վերագրում է բոլոր պրօպագանդիստներին : Եթէ այն ներդաշնակ հասարակական կարգերը, որոնց մասին մենք մտածում ենք, կարելի լինէր իրագործել առանց մի կաթիլ արիւն թափելու, այդ դէպքում, խօսք չկայ, որ մենք ամենքս բոլոր սրտով ուրախ կը լինէինք : Ես կարծում եմ միայն, որ բռնի յեղափոխութիւնը, յայտնի հանգամանքներում, անխուսափելի մի չարիք է, որ պէտք է շուտ թէ ուշ անցնի, մինչեւ անգամ առանց առանձին անհատների կամ խմբերի ջանքերի պէտք ունենալու . . .

Նախագահ սէնատոր Պետերս . — Այդ դատողութիւնների գործին չեն վերաբերում :

Բարբիւնա . — Ես ուզում եմ միայն մեկնաբանել իմ հայացքս յեղափոխութեան եւ պրօպագանդայի մասին . կարծում եմ, որ իմ հայացքներս համապատասխանում են միւս մեղադրիչներին շատերի հայացքներին եւ հետեւապէս իմ բացատրութիւնը աւելորդ չի լինիլ, եթէ դրանով պատկերացնեմ պ. պ. դատաւորների առջեւ պրօպագանդիստների իսկական գոյնը :

Ես, պարոններ, պատկանում եմ այն մարդկանց թւին, որոնք երիտասարդութեան մէջ յայտնի են խաղաղ պրօպագանդիստների անուան տակ : Ներանց նպատակն է՝ մոցնել ժողովրդի դիտակցութեան մէջ լաւագոյն, ամենաարդար հասարակական կաղմակերպութեան իդէալները, կամ թէ բացատրել նրան այն իդէալները որոնք արդէն թէեւ անգիտակցաբար արմատացած են նրա մէջ, ցոյց տալ նրան ներկայ կարգերի թերութիւնները, որ

որ ապագայում չը կրկնվեն նոյն սխալները : Բայց թէ ե՛րբ կը գայ այդ ապագան՝ մենք այդ չենք որոշում եւ չենք էլ կարող այդ անել, որովհետեւ նրա վերջնական իրագործութիւնը միայն մեզնից չէ կախված : Ես կարծում եմ, որ այս տեսակ պրօպագանդան ապրատմութիւն գրգռելուց դեռ շատ հեռու է :

Դատախազը ասում է, որ մենք ուզում ենք վերացնել դասակարգերը եւ հասկանում է այդ ա՛յն մտքով որ մենք ուզում ենք մոլորել առաջինից մինչեւ վերջինը՝ բոլոր կարեւորագույններին, պաշտօնականներին, վաճառականներին եւ բոլոր հարուստներին ընդհանրապէս : Բայց դա նմանապէս թիւրիմացութիւն է : Մենք ձգտում ենք վերացնել այն առանձնաշնորհումները, որոնք բաժանում են մարդկանց երկու դասակարգի՝ հարուստների եւ աղքատների, եւ ո՛չ թէ կոտորել այն անհատներին, որոնք կազմում են այդ դասակարգը : Ես կարծում եմ որ մինչեւ անգամ գործնականապէս անհնարին կը լինէր կոտորել այդքան մարդկանց, եւ թէ մինչեւ իսկ ունենայինք այդպիսի խստախիտ հակումներ : Մենք նմանապէս չենք ուզում հիմնել բանւորական դասակարգի մի ինչ որ պետութիւն, որ սա իր կողմից սկսել էր ճնշել միւս դասակարգերին, ինչպէս այս եղրակացում է դատախազը : Մենք ձգտում ենք դէպի հանրային երջանկութիւն եւ հաւասարութիւնը, որչափ դա չէ կախուած անհատական առանձնայատկութիւններից, բնաւորութիւնների, սեռի, հասակի եւ գրանց նման տարբերութիւններից : Այդ կարող է ունենալ անխաղաղիկ երեւալ, բայց յամենայն դէպս, դրանում արիւնաբուռ եւ անարդարական ոչինչ չկայ : Արեւմտեան եւրօպայում այդ տեսակ պրօպագանդա անվում է ամեն օր, եւ ամենեւին ոչ ոքի չէ պարմացնում իր արմատականութեամբ, չէ չփոխում մտքերը եւ չէ վրդովում հասարակութիւնը, — գուցէ այն պատճառով, որ այնտեղ վաղուց արդէն սովորել են քննադատել այդպիսի հարցերը ազատ կերպով, հրապարակապէս . . .

Դատախազը մեղ անուանում է քաղաքական յեղափոխականներ . բայց եթէ մենք ձգտելիք քաղաքական մի գու s'կղա (՝) անել, մենք այդպէս չէինք սկսիլ գործ, մենք չէինք դիմիլ ժողովրդին, որին զեռ պէտք է նախապատրաստել եւ զարգացնել, ալ կըսկէինք որոնել եւ միացնել զարգացած դասակարգերի դժգոհ տարրերին : Այդ աւելի նպատակայարմար կը լինէր . բայց բանը նրանում է, որ մենք բոլորովին չենք ձգտում այդպիսի մի գու s'կղա անել :

Դատախազը ասում է նախապէս, որ մենք ուզում ենք հասարակութեան մէջ անիշխանութիւն հաստատել : Այո՛, իրաւ է, մենք իսկապէս ձգտում ենք իրականացնել անիշխանական հասարակական կարգեր, բայց բանը նրանումն է որ այդ խօսքը այն մտքով, ինչպէս նա հասկացվում է ժամանակակից գրականութեան մէջ եւ ինչպէս ես ինքս եմ հասկանում, ամենեւին չէ նշանակում անկարգութիւն եւ կամայականութիւն : Անիշխանութիւնը, ընդհակառակը, ձգտում է մոցնել հասարակական բոլոր յարաբերութիւնների մէջ համեմատելիութիւն եւ կարգ : Նա անհատների կամայականութիւն չէ, որովհետեւ նա ընդունում է, որ մի անհատի ազատութիւնը վերջանում է այնտեղ, ուր սկսվում է մի ուրիշի ա-

(՝) Յանկարծակի մի հարուածով կառավարութեան դէկը ձեռք առնել :

զատութիւնը: Նա միայն մերժում է այն ճշդող կառավարչական ոյժը, որ խանգարում է հասարակութեան ազատ կերպով զարգանալ:

Այսպէս ուրեմն, քննելով բոլոր ինձ վրայ բարձած ոճիրները, ես տեսնում եմ, որ իսկապէս նրանցից ոչ մէկում էլ չի լինում վիճակ էլ ինձ սպասելիս լինի, ես, պարոն դատաւորներ, ձեզ նից զթուկեմ չեմ խնդրում եւ ձեր դժուրութիւնը ինձ հարկաւոր էլ չէ: Հաւանքով մեզ ինչքան կուզէք, բայց ես խորապէս համոզված եմ, որ այն ընդարձակ շարժումը, որ շարունակվում է արդէն մի քանի տարի եւ որը անկասկած առաջացել է նոյն իսկ ժամանակակից պահանջներէ, չի կարելի զաղրեցնել ոչ մի բռնադատական ձեռնարկութիւնով: . . .

Նախագահ սէնատոր Պետերս. — Մենք բոլորովին պէտք չունենք իմանալու թէ դուք ինչ համոզմունքներով եք արտայայտվում:

Բարդինա. — Գուցէ մի առժամանակ ճշդութիւն այդ շարժումը, բայց աւելի ուժեղ կերպով կը վերածնի նա, ինչպէս սովորաբար լինում է ամեն այդ տեսակ ճշդութիւնից յետոյ. — եւ այսպէս կը տեսնուի մինչեւ մեր զաղափարները յաղթանակ կը տանեն: Ես համոզուած եմ եւ նրանում, որ կը գայ մի օր երբ մինչեւ անգամ մեր քնած ու անտարբեր հասարակութիւնը կտրթնայ եւ կամայէ որ այդքան երկար ժամանակ թոյլ է ավել անպատիժ կերպով իրեն ստնակրի անելու, յափշտակելու իր գրկից իր եղբայրներին, քոյրերին ու աղջիկներին եւ կորսնցնելու նրանց լոկ միայն իրենց համոզմունքներն ազատ կերպով դառանելու համար: Եւ այն ժամանակ նա մեր կորստի վրէժը կառնէ . . . Հաւանքով մեզ—նիւթական ոյժը առ այժմ ձեր կողմն է. պարոններ, իսկ մեր կողմն են բարոյական ոյժը, պատմական առաջադիմութեան ոյժը, դադարի ոյժը, իսկ զաղափարները, — աւել, սուրբներով չեն որակում: . . .

ՀԵՐՔՈՒՄԸ ՀԵՐՔՈՒՄԸ

Վանայ կյոյր Դար թաղի կրօնափոխ ազգայնաց մայրենի Եկեղեցւոյ գիրկը վերադարձած ըլլալու լուրը սխալ է անձիշդ բողոք հռովմէական Հայոց Պատրիարքը այսօր ամենալու գաղտնաբերուած է: Որովհետեւ Ազգ. Պատրիարքարանի վերջին մէկ հեռագրին ի պատասխան Վանայ Առաջնորդական տեղապահ Ստեփան վարդապետը հեռագրաւ կը ծանուցանէ թէ կյոյր Դար թաղի 125 տան հայերէն 30ը կաթողիկէն եղած արդէն, իսկ 62ը որոնք կաթողիկէ եղած էին՝ իրենց մայրենի Եկեղեցւոյ գիրկը վերադարձած են եւ ասոնց համիտիյէի փոփոխութեան գործողութիւնը կը կատարուի այս միջոցիս: Հետեւաբար 33 տուն միայն կը մնան կաթողիկէ:

Արդէն հռովմէականաց Պատրիարքին հերքմանգրոյն սխալը իր մէջն էր. որովհետեւ նա կըսէր թէ տեղւոյն կաթողիկէ Եկեղեցւոյն մէջ կատարուած արտակարգ հանգէսի մը ատեն խուռն բազմութիւն մը ներկայ է եղել: Ուստի պարզ էր

հասկնալ թէ արտակարգ հանգէս մը տեսնելու հետաքրքրութեամբ հաւաքուած ժողովուրդը անպատճառ պատկան եղած չէր ըլլար. ինչպէս ամէն տեղ այդ տեսակ հանգէսներու ատեն ժողովուրդը տարբեր գաւառնութեանց հաստատութիւնները ալ անխորաքար կը յաճախէ միայն հետաքրքրութիւնը յաղեցնելու համար. զոր օրինակ, վառնայի մէջ ալ նայն իսկ այս կիրակէ Պատ. Հայկ Եւրոպեանի քարոզին 30.35 ազգայիններ ներկայ էին, բայց ասոնց մեծագոյն մասը բողոքականութեան մալի չափ հակում չունեցող անձեր են, որոնք Պատուելիին ուղղակի ծանուցումներէն հետաքրքրուելով զայսօր էին քարոզը լսելու:

ԼՐԱՔԱՂ

Պոլսոյ մէջ Սուրբազնայի անուն օրաթերթ մը ալ սկսած է հրատարակուիլ, այս թերթ մի քանի տարի առաջ հրատարակուող Հայրենիքի ծաւալը ունի եւ պիտի զբաղի ազգային, քաղաքական, գրական եւ տնտեսական խնդիրներով: Սուրբազնայի արտօնատէրն է Ճէրիտէի Շարգիյէի տնօրէն Տիգրան էֆ. Ճիվէլեկեան:

— Գաղտնի գրեզի (Պոլիս) Արամ ան երկսեռ վարժարանի աշակերտները ու աշակերտուհիները իրենց մէջ հանգանակութեամբ 6 օսմ. ոսկի զրկած են Պատրիարքարան, որոշելով ամէն տարի նոյնքան գումար մը հաւաքելով յանձնել Պատրիարքարան, որպէսզի Արամեան սաներուն անուամբ որը մը պատարուի եւ դաստիարակուի Արաբիէի որդանոցին մէջ:

Պոլսոյ նստակիթարանի մը մանկները ալ որբեր կը խնամեն. իսկ ամբողջ Պուլկարիոյ ե Ռուսմանիոյ բոլոր հայերը քանի որ խնամեցին:

— Պոլսոյ կրօն. ժողովը իր վերջին նստին որոշած է Մեր հարց դաւանաքիւնը վերնագրով չըլաւ. բերական մը ուղղել մայրաքաղաքի եւ գաւառաց բոլոր Եկեղեցիներուն:

— Պատրիարքարանի խուռն ժողովը իր յառաջիկայ նիստին մէջ պիտի զբաղի Պոլկարիոյ հոգեւոր հովուութեան խնդրով. Պոլսոյ թերթերը հաւանական կը գտնեն թէ այդ պաշտօնին Տ. Վահան վրդ. Գալոբեանը կոչուի, որ ասկէ առաջ Պատրիարքարանի տեղապահն էր:

— Կ. Պոլսէն Իււդէր մարտ 4 թուականով կը հեռագրէ թէ Ռուսական զեսպանը Դրան ուշադրութիւնը հրաւիրել է այն իրողութեան վրայ թէ Ռուսիոյ սահմանակից օսմանեան նահանգներուն մէջ թշուառ հայերը կաթողիկէ կրօնքը կընդունին, եւ յայտնել է թէ հարկ է վերջ մը դնել կաթողիկէ բրոքականության:

— Անգլիոյ խորհրդարանը այս

օրերս զբաղեցաւ հայ որբերուն խնդրով:

Պ. Սիւրբազնայի հարցոց արտաքին գործերու խորհրդականին թէ կարող է տեղեկութիւն մը տալ ի մասին այն հրամաններուն զորոնք կըսուի թէ Դուռը տուեր է մէկ քանի կուսակալներու՝ գոցելու համար որդանոցներ որոնք հիմնուած են եւ կը պահուին մասամբ կամ ամբողջովին անգլիական կամ ամերիկեան նուէրներով, եւ որոնք զուտ մարդասիրական նպատակներով հաստատուած են յօգուտ հայ ժողովրդին: (*)

Պ. Պրոտրիք, ի պատասխանի, ըստ. — Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը կը տեղեկագրէ թէ Բալուի եւ Ջեքուլի որդանոցները փակուած են, եւ թէ Տիարպէքիւրի մէկ որդանոցին տղաքն ալ անհասնելու յանձնուած են, որոնց տանը մէջ կը պահուին միսիօնարներու դեսպանի: Չեմ կրնար ըսել թէ Ջէյթիլի որդանոցը դեռ բաց է: Յայտնի չէ թէ ո՞ր նահանգաց կուսակալներուն հրաման զրկուած է այս մասին: Դեսպանը սաստիկ գիտողութիւնները բրած է թիւրք կառավարութեան՝ զիրենք տարհամոզելու համար այս մասին, եւ իրենց ցոյց տաւ թէ թշուառութիւնը եւ գէշ ազդեցութիւնը որ յառաջ պիտի բերէ այդպիսի բըմահաճ եւ անարդարանալի արարք մը:

Նոր կեանք

ՀԱՅ ՈՐԲԵՐ ԵՒ ԱՅԻՆԵՐ

Հետեւեալ ցանկը ցոյց կուտայ գաղաւթի մէջ քուսաւ մնացած այրիներուն եւ որբերուն քիւր:

Գաղաւթ քիւ որբերուն քիւ այրիներուն		
Կարին	356	152
Վան	6000	4000
Բաղէշ	1649	772
Մուշ	6632	3668
Տիգր	2344	1288
Խարբերդ	2021	624
Արաբկիր	2102	863
Արթուկ	536	125
Եղեւսիտ	4128	1257
Մարաշ	425	274
Սեբաստ.	1053	650
Մալաթիա	1853	837
Ջէյթիլ	445	325
Բարբերդ	4315	450
Չմշկոծագ	280	110
Չարսանգ	220	170
Տարէնտէ	50	19
Հիւսնախանս	60	21
Ակն	1219	560
Կիրիւն	1165	726
Ելզնկա	975	315
Եւզոկիա	975	265
Ամասիա	550	230
Քղի	523	180

(*) Մինչդեռ կաթողիկէ եւ բողոքական քարոզիչները այս նպատակաւ տրուած գրամները հայ ազգին մէջ բաժանուանելու եւ կրօնական խորութիւններ ձգելու կը գործածեն:

Տիգրիկ	362	142
Ջեք. Ստշ.	335	301
Ստանա	303	145
Սղերդ	145	70
Շապին Գա.		
Բահսար	117	55
Հաճըն	65	32
Քիլիս	60	35
Քէմալ	15	40

Խաւաքմը 38,278 18,670

Թ Ի Ի Ր Ք Ի Ա
ՎԵ
ԵՈՒՆԱՆԻՍԹԱՆ

Աթինատան Թանըն մուկալիւրի աթիտէքինի եղբայր տըր:

Մաքէթնիւ մէսէլէսինտէն տօլայը Թիւրքիա վէ Եունանիսթան պէնիստէ միսնասէպաթ սըգլաշլաշտը: Պապը Ալի Բուվարը Պուկարլարտան իրադ թուլմագ զայրէթինտէ տիր. պու սէպէպէ Եունան հիւքիւմէթինէ պիր թաղը մատար իթտի: Աթինա գապինէսի տալի պու սըրա Մաքէթնիւ մէսէլէսինտէ գուվէթ վէր. մէյէճէկինէ Պապը Ալի թէմին իթտի: Թիւրք հիւքիւմէթի պու էմինյէթլէ Թէսալիատաքի ասքէրլէրինի չէքուպ, Մաքէթնիւնըն պաշգա թարաֆլարընա, պաշընա Պուկարիա սինօրը իւզէրինէ կէթիրտի:

Պապը Ալի Եունան էյիսի բըրէնա Մալրօգօրաթօյա պին չէ. շիտ վատար եարմագտա տըր. ֆագաթ պու վատարըն հիշ պիրիսի իճրա օլընմայօր: Սուլհահտ. նամէսի մուճէպինճէ բօլիթիգա միւտթէհիմի օլան Բուվարա աֆիլը ումուսի օլմը իքէն, սօն մուհարէպէտէ Եունան օրաուսընա կէօ. նիւլիւ կիտէն Բուվար էլան թիւրք զընթանլարընտա պէքլէմէքտէ տիրլէր. Եունանլարա էվիլէքի կիպի մէզուլնիյէթ վէրիլմէք սուլհահտ. նամէսինտէ ահքեմալընտան իքէն, անլէրէ հէր նէվ ընհիտէ վէ սըգընթը վէրիլմէքտէ տիր: Պու սէպէպէրլէ Եունան էյիսի Պապը Ալիյէ պիր բըթթէթ վէրուպ, գօրեալարըն էվրօրա տէվլէթլէրինէ կէօնտէրտի. ֆագաթ պու կիւնէ գաւար պունուն տալի պիր սէմէրէսի կէօրիւմէտի:

Նիհայէթ պիւթիւն Թիւրքիա տա րուվարըն հալլէրի թէհէմիւլ օլընմայաճագ տէրէճէտէ տիր. Եպիրոստա վէ Մաքէթնիւտա պուլընան Եունան գօնսօլալարըն. տան կէլէն բարօրլար խրիսթիյան էհալինին հալլէրինի բէք ֆէ. նա անլատիյօրլար, վիլայէթլէրտէ թիւրք հիւքիւմէթլէրին գուլուվարընտան պաշգա, հիւքիւմէթի սայմայան Արնաւուլար, պաշըպօլուվար վէ կիրիտի մուհահիրլէր էնվաի մէզալիմի իճրա իթմէքտէ տիրլէր:

Ղատարուլը իլէ նամտար օլան

Սուլթանըն սեփիլիսի արնավուտ Ղանի պէյին գաթիլի հաֆըզ Բաշայը պուլմազ իչին չօգ քիմսէ. լէր մահպուլէրտէ չիւրիօրլար, պու սեփիլէր հաֆըզ Բաշայը թաւնըմը վէ եսխոտ օնունլէ տիգու. իթասը օլմուշ օլտըղընտան տօլայը պէտպախտ օլտըլար. պու սեպէպտէն 3 րում տախի մահ. պուստա րէնճիտէ ալթընտա տըրլար. օնլարը գուրթարմագ իչին էլչինին մուրաճաաթլարը սէմէրէ. սիլ գալտը. իչթէ պու սեպէպլէրլէ Եունանիսթան էհալիսի հէնիտէն իթլըլէրէ գարըը հիտ. տէթլէնմէքտէ օլուպ, իթլըլէր իլէ սամիմի տօսթլըզ միւմքին օլմայաճագ տէմէքտէ տիլլէր:

Պալգան մէմալիքինտէ պուլընան խրիսթիյան միլլէթլէրտէ իթլիֆագ հասըլ իթմէկէ չալլըան լար պու հալլէրտէն էլիճէ իսթիֆատէ իթմէքտէ օլուպ, Եունանիսթանտա պու իտէայը իլէրի կէօթլըմէքտէ տիլլէր:

ՄԱՍԵՐԻԳԱ

Վէ

ՖԻԼԻԲԵՆ ԱՏԱԼԱՐԸ

Ֆիլիբեն ատալարընը սուլհէն թէսքին իթմէք մէմուրիյէթի իլէ մէքըլըր ատալարա եօլանըան ա. մերիգալը գօմիսիօն ախիւրէն պիլ իլաննամէ նէշր իթմիշ վէ ատալարըն հէր թարաֆընա տաղըթմըլ տըր: Պու իլաննամէ Ֆիլիբին ա. տալարընա Ամերիգանըն գօնթրօլը վէ հիմայէսի ալթընտա օթօնօմի պիլ հիւքիւմէթ իտարէսիին իէշքիլ օլընաճաղը վէ պու հիւքիւմէթ իչին տէվլէթլէրին րէզասը իսթիհալ օլընտըղընը պիլտիլմէքտէ տիլ: Մ. Ամերիգա Սպանիանըն գուլուպարընտան Ֆիլիբինլիլէրի գուրթարմըլ օլմաղլէ սուլհ Եունանիյի իպգա իթմէք մագսէտինտէ օլտըղընը պէյանլէ ասըլարըն սիլահալար պրագուպ, քէնտիլէրինի գուրթարան տէվլէթին վատարընա էմիլիյէթ իթմէլէրինի նասաճատ իտէյօր:

—Չոմպօսակար զապթ իթմէք իչին Պօսթօնտան մէքըլըր սահիլէ կիթմիշ օլան Ամերիգա տաքէրլէրի գարայա չըգամայօրլար. զիլա իչէրտէ հէրլիլէր ումուճէն ըսեանտա պուլընուպ, աղ գուվլէթլէ ալթ օլընմայաճաղար:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Թանըն Սօֆիատան ալտըղը մալիւմաթա պինտէն, Պուլկարիանըն պէլէտիյէ մէճիլլէրի լաղվ իթմէք վէ հէնիլէր թային էլլէմէք իչին Սօֆիատա միւլէքէրէ. լէր օլընմագտա ըմըլ. պու թէտ. պիլ ինթիսապարտա հէնի հիւ. հիւքիւմէթին մուվաֆագըլէթինի թէմին էլլէմէք մագսէտի իլէ օլ.

աղլէ, Մ. Բատուլաֆօֆըն տօսթ. լարընը ինթիսապ իթտիլմէկէ պիլ գօլտլըզ օլաճագ ալլըր:

—Ֆէլիսամ. Բրէնս հադըթլէրի Սթանպօլ Աւստրիա էլչինի Մ. Գալիլէ Ս. Ալեքսանդրըն պէօյիւք գօրտօնընը իհտա իթմիշ տիլ:

—Նով վիդ նամ կաղէթանըն հաղտըղընա նազարէն, Մ. կրէքով վէ Մ. Բատուլաֆօֆ հէնի ինթի. իսապարտան տօլայը եագընլարտա Պուլկարիա տախիլիտէ սէյահաթ իտէճէք իմիշլէր:

—Կէշէլէրտէ Ճըրճօֆատա Գունայա տիւլմիւշ աէնիլէն հաճի Թակուր պու տէֆա պիլլէ պիլտի. րիյօր քի օ եօլտա պիլ ֆեւաքէթէ ուղրամալը, վէ պու կիւն սաղ սէլամէթ պուլընլօր. մէքըլըր չայեայը չըգարան զարէպընարալ. րընա տէ նալլէթ օգըլօր:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՑԵ

—(—)

Թայմըղըն Բոմա մուխիլի պիլտիլմիշքի Չին տէվլէթի իթայիանըն թէքիֆինտէն տօլայը մուխապէրաթա կիլիլիլմէսիինի գա. իթէն րէտտ իթմիշ ալլըր:

—Ճարօն տէվլէթի տախի Չին մէսէլէրինտէ ինկիլթէրա իլէ մինաֆիլէրի պիլ գըլայատա օլտըղընը պէյան իթմիշ օլուպ, տիկէր տէվլէթլէրի իհթիլայթլէ տալ. րանմագտա տըր: Եագըն վագըթ. տա Չինին թագսիմի ճիհէթինէ կիտիլէճէկի զանն օլընլօր. պու. նա իհթիլայթլէն Ճարօնիա գուվլէի հարպիյէսիին արթըրմագտա տըր:

—Ճէնէրալ Մաքարօֆ Երմագ նամընտա նէվիճատ պիլ պուլ. գըրան վարօր եագըն օլուպ, կէշէլէրտէ տօնմուշ օլան Ճէնուպ տէ. նիլլէրինէ սէյահաթ իտէրէք 130 քիլօմէթրօ մէսաֆէտէ 2-2 1/2 մէթրօ գալընլըզտա օլան պուլ. լարը գըրմագլէ Գրօնթատա վա. սըլ օլմըլ տըր. պու մինաթիպթ. լէ վարօրըն րէսմէն թագտիս այնը րուհանիսի իճրա օլընտըղընը մա. հէլի մէքըլըրտէն պիլտիլմիշլէր տիլ: Ճէնէրալ Մաքարօֆ մէք. քիւր վարօրըն միւճիտի օլտըղը կիպի գօմանտանըղը տախի տէր. էօհտէ իթմիշ տիլ:

—Ինկիլիլ վէ Ֆրանսըզ տէվլէթլէրի պէյինտէ սէպէպի միւ. նաղատ օլան մէքէպի Աֆրիգա մէսէլէսի հալլ օլընմըլ տըր: Գօն. կօնըն (Պէլճիգանըն օլան գըսմը) Ճէնուպի ճիհէթինտէն Պահրէլ—կաղլէ վէ Տարֆուրա գատար ինկիլթէրանըն օլաճագ, վատայի, Պաղէրմի, Գանէն վէ Չատ կէօ. լիւնէ գատար Ֆրանսըզլար հիւքմ իտէճէքլէր տիլ:

Ֆադաթ Նիլտէն Չաթա գատար պուլընան էյալլէթլէրտէ հէր իքի միլլէթ միւսապաթ իւզրէ թիւճար. լըզ էտէպիլէճէքլէր. Նիլ սահիլ. լէրինտէ Ֆրանսըզլար թիւճարըղա

տայիլ էպնիլէլը վէ ֆապրիգալար թէէսիս իթմէկէ մէղուն տըրլար:

Հէր իքի տէվլէթ քէնաիսիէն ալիտ օլմալուն գըլթալարտա սիյա. սի մագսէպլէրէ մէպնի հիշ պիլ հարէքէթ իտէմէլէճէքլէր:

Լօրտ Սօլպէրի Մ. Գամպօն իլէ պու մէսէլէի հալլ իտուպ, թա. րաֆէյնտէն իմզալանտըգտան սօն. րա եօլա չըգմըլ օլուպ, պու կիւն. լէրտէ Ֆրանսայա կէլմիշ տիլ:

—Վէրէմ իլլէթինէ գարըլ պիլ թէտալի չարէսիին պուլմագ իչին կէլէճէք մայիս 4 տէ Պեր. լինտէ Ալմանիա իմքէրաթօրիցասը. նըն հիմայէսի ալթընտա թապիպ գօնկրէսի թօլանաճագ տըր: Թիւրքիա թարաֆընտան տախի Ֆէյզի Բաշա վէ Ճէլալ խալիլ պէյ կիտէճէքլէր:

—Հօլանտանըն բայթաթլը օլան Լա—Հէյ շէհրինտէ եագընտա թօլանաճագ օլան թէքը սիլահ գօնթէրանսընա իրան հիւքիւմէ. թի թարաֆընտան Բէթէրպուրկ սէֆիլի Միլիզա Բիլա խան մու. րախաա թային գըլընմըլ տըր:

Ֆինլանտիա էյալլէթինի Բուս. լաշտըրմագ իչին վուգու պուլան թէշէպպիւսաթ ալէյհինտէ բրօ. թէսթ օ իթմէք իւզրէ, Ֆինլան. տիա էհալիսի թարաֆընտան Բէ. թէրպուրկա կէօնտէրիլէն 400 քիլիլէք հէյէթ մէպուսէ՝ Բուսիա իմքէրաթօրը թարաֆընտան գա. պուլ օլընմալըլ տըր: Բէթէրս. պուրկ բօլիս միւտիլի՝ պուլլարա տէրհալ մէմէքէթլէրինէ տէօնմէ. լէրինի էմր իթմիշ ալլըր:

—Աւստրիա—Մաճառիսթան օր. տուսունըն արթըրըլմալընա գա. լար վէրիլմիշ տիլ: Հարպիյէ նէ. գարէթի սիլահ ֆապրիգալարընա պինտէն զիյատէ չապուգ ալթէլի թօր իլէ, սիւվարի իչին հէնի պիլ չապուգ վէ չիֆթ ալթէլի գարաթինա սըբարըլ իթմիշ տիլ:

—Սօֆիա կաղէթալարըն պէ. յանընա կէօրէ, Սերպիանըն սա. պըզ գրալը Միլան չու սըրա Պէլկրատտան միւֆարէքէթ իթ. միշ վէ պիլ գալ ալ սօնրա տախի պիւթիւն պիւթիւնէ խարիճէ չը. գաճագ ըմըլ: Սերպիանըն վիւ. քէլա ըլլիսի Մ. վլատան Եօրկէ. վիշ Բուսիա իլէ պօզուլմըլ օլան մինասէպաթլը տիւլէլթմէք իչին հէր պիլ զայրէթտէ պուլընլօր:

—Կիրիտին սէր գօմիսէրի Բը. րէնս Եօրկի ինկիլթէրանըն Բրէն. սէս տը կալ վիթթօրիա իլէ նի. չանլանաճագ ըմըլ:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

—(—)

Բուսիատա պուլընան մուհաճիլ էրմէնիլէրին Թիւրքիայա ալտէթ իթմէլէրինէ տայիլ Բուս էլլիսիին միւրաճաաթընա Պապը Ալի մէմ. նունիլթպախ չիլը ճէվապ վէյ րուպ, ալլէրին իսիմ ճէտպիլինի վէ պաղը մալիւմաթլար իսթէտի:

—Թիւրքիա թարաֆընտան թէքի սիլահ գօնկրէսիինէ կէօն. տէրիլէճէք մուրաթալար 4 քիլի. տէն իպարէթ օլաճագ. խարիճիյէ նէգարէթինին սէր քեալթիպի Նուրի պէյ, Սուլթանըն հալլէրա. նընտան գօմանտան Ապտուլա. Բաշա, գաթիլան Մէմէտ Բաշա վէ պու հէյէթին րէյասէթի տա. խի պիլ վէլիլէրէ իհալէ օլընտագ. զաննիաթա կէօրէ սապըզ խարի. ճիլէ նաղըրը Թաւրհան Բաշա օլա. ճագ տըր:

—Սամա առաքընտաքի սօն գարըլըղըլտան տօլայը Ալմանիա վէ ինկիլթէրա պէյինտէ միւնու. զաա գուհուր իտէճէք կէօրիւնիյօր: զիրա Ալմանիա Սամայըլարը մու. հաֆագա իթմէքտէ տիլ:

—Մանիլատան ժէնէրալ Օթիս սօն թէլէկրոթը իլէ տիյօր քի, Ամերիգալըլար ճէնուպ ճիհէթինէ տօղու իլէրի կիթմէքտէ բէք չօգ միւլէլաթ չէքիյօրլար. ասըլար պուլընտըղլարը եէրլէրի հապուպ կէրի գալարագ կիւզէլ մէվըլար թուլըլօրլար վէ բէք ճէտըլըզ. լէ ճէնկլէլիյօրլար իքի թարաֆ. տան թէլէթիլաթ օլմագտա տըր:

—Բուս տէվլէթին սօն գալարըլ իւզրէ Ֆինլանտիայա մախսուս օլան բուլլար պուլնտան սօնրա պաթթալ օլուպ, օրատա տախի Բուսիա բուլլարը գուլանըլանա. ճագ տըր:

ԱԶԴ

Նկեղեցական եւ Ազգային Երգերա. ծանօթ՝ Նրաթիլտ Դասասուս մը, որ միանգամայն Ազգային եւ Նկեղեցական Պատմութեանց, եւ կրօնի գասեր կա. րոզ է ստանձնել, պատրաստ է, Պուլ. կարիյ եւ Թուանիյ Ազգային վար. ժարանաց միոյն մէջ գոհացուցիլ պա. մաննեղով պաշտօն մը ընդունիլ: Փափաքողները պէտք է զիմնի Ի. րաւունքի խմբագրատունը:

ՆՈՐ

ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՍ

ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱԿԱՆ

Կը ճախուի «Իրաւունք» ի խրը. րագրատունը:

Գիւն 1 Յրանդ

ԱԶԴ

Հայ ընտանիք մը ի Սիլիստրէ կը փափագի որդեգրել 2—6 տա. րեկան Հայաստանցի քաջառողջ որդ մը: Դիմիլ իրաւունքի խըմ. բաղրութեան:

Отговорникъ Ю. Н. Пекаревъ
Печатница «Взаимность»—Вурна